

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՊԼՈՎԴԻՎ ՔԱՂԱՔԻ ՀԱՅՈՑ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ 150-ԱՄՅԱԿԸ

1978 թվականի դեկտեմբերի 24-ին, կիրակի օրը, հանդիսավորությամբ նշվել է Պլովդիվի հայոց ս. Գևորգ եկեղեցու վերանորոգության 150-ամյակը:

Հայ և բուլղար ժողովուրդների բարեկամությունն ու եղբայրական կապերը խոր հնություն ունեն:

Հայերի՝ դեպի Բուլղարիա գաղթը «շատ կանուխեն սկսած է», գրում է Պլովդիվից ուղարկած իր թղթակցության մեջ Վահե Զերչիլանը: Հայերի գաղթը դեպի Բուլղարիա շարունակվել է «Բյուզանդական Կայսրության օրերեն սկսյալ մինչև 1922 թվականը, մինչև վերջին գաղթը»:

Պլովդիվը՝ պատմական Ֆիլիպոպոլիս կամ Ֆիլիպե քաղաքը, կառուցել է Մեծն Ալեքսանդրի հայրը՝ Փիլիպոս թագավորը: Շատ վաղուց, ավելի ուշ ժամանակաշրջանում, այստեղ կազմակերպվել է նաև հայ համայնք:

«Բելկրատցի Աբրահամ կամ Աբրո Զելեպին սուլթանական հրամանով 1675 թվականին» ձեռք է բերում «խարխուլ հունական փոքրիկ սուրբ Յորկիոս (ս. Գևորգ) եկեղեցին», որի շուրջ էլ կազմակերպվում է տեղի հայ համայնքի եկեղեցական կյանքը:

«Ժամանակի ընթացքին կարիքը կըզգացվի հիշյալ փոքր եկեղեցին վերանորոգել և ընդարձակել: 1828 թվականին, ասկե 150 տարիներ առաջ, տեղվույն հայ ազգաբնակչությունը կվերանորոգե եկեղեցին; շինելով այժմյան եկեղեցիի կեդրոնական քարակիր մասը:

Ս. Գևորգ եկեղեցին մեծագույնն է բուլղարահայ եկեղեցիներու մեջ: Եկեղեցվո շրջափակին մեջ կգտնվի ս. Խաչ մատուռը, որ կառուցված է 1896 թվականին: 1896 թվականին այստեղ այցելած է անմահն Կոմիտաս վարդապետը: Այս մասին եկեղեցվո գլխավոր մուտքի առընթեր հուշատախտակ մը կա: Եկեղեցվո շրջափակին մեջ կգտնվին նաև զանգակատունը որ կառուցված է 1850 թվականին, հայ մշակույթի տունը և նախկին հայկական ազգային վարժարանի շենքերը: Անցյալի մեջ եկեղեցվո սույն շրջափակը ծառայած է որպես գերեզմանատուն տեղի հայ համայնքի»:

Պլովդիվի հայոց ս. Գևորգ եկեղեցու վերանորոգության 150-ամյակի հանդիսությանը ներկա են եղել հայ և բուլղար հավատացյալների հոծ բազմությունը, Պլովդիվի բուլղար եկեղեցու վիճակավոր տ. Վաղլամ սրբազանը, տեղի կաթոլիկ արքեպիսկոպոսը, քույր եկեղեցիների այլ ներկայացուցիչներ, քաղաքի հայ քաղաքագլուխ և «Երևան» կազմակերպության Կեդրոնական վարչության նախագահ տիար Տիրան Բարիքյանը, բուլղարահայ թեմական խորհրդի նախագահ տիար Օննիկ Ասլանյանը, հայ մշակութային, մարզական կազմակերպությունների պատասխանատու անդամներ, մտավորականներ և պաշտոնական այլ հրավիրյալներ:

Հոբելյանական հանդիսությանը նախագահել է Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը, որը պատարագել և քարոզել է կիրակի օրը:

Եկեղեցական արարողություններին իր մասնակցությունն է բերել «Ս. Ներսես Շնորհալի» երգչախումբը՝ գեղարվեստական ղեկավարությամբ երաժիշտ Սարգիս Բալթայանի:

Հավարտ ս. պատարագի կատարվել է հոգեհանգիստ՝ «եկեղեցվո կառուցման և սպասարկման իրենց ծառայությունը բերած հին և նոր անջեցյալներու հոգիներուն խաղաղության համար»:

Եկեղեցական արարողության ավարտին

բոլոր ներկաները առաջնորդվում են դիվանատուն, ուր տ. Տիրայր սրբազանը շնորհակալություն է հայտնել հոբելյանը կազմակերպող ազգային մարմիններին:

Հանդիսության ընթացքում տիար Վահե Զերչիյանը ընթերցում է բուլղար բանաստեղծ Նեստոր վարդապետի «Էջմիածին» ճաշկերույթը վերածվում է հայ և բուլղար ժողովուրդների բարեկամության արտառուչ տոնի:

Պլովդիվի հայոց ս. Գևորգ եկեղեցու վերանորոգության 150-ամյա հոբելյանի հանդիսությունն ավարտվում է առաջնորդ սրբազանի «Պահպանիչ»-ով:



Պլովդիվի հայոց ս. Գևորգ եկեղեցու ընդհանուր տեսքը

ձոնը՝ նվիրված Ամենայն Հայոց Հայրապետին, գրված Մայր Աթոռում, երբ հեղինակը ուխտավորաբար գտնվում էր ս. Էջմիածնում:

Ժամը 13-ին Պլովդիվի «Թրիմոնդիում» հյուրանոցի ճաշասրահում տրվում է ճաշկերույթ՝ օրվա հանդիսության առիթով:

Այս առթիվ դեկտեմբերի 25-ին, ս. Ստեփանոսի տոնի օրը, տ. Տիրայր սրբազանը սարկավագական աստիճան է շնորհում ս. Գևորգ եկեղեցու երկարամյա դպիրներ Եսայի Մանուկյանին, Վարդգես Զենկելյանին, Ղազարոս Զաքրյանին, Նուբար Գալըստյանին և Լևոն Պապիկյանին: